



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

ԿԱՐԳ

Ը ն դ ու ն վ ե լ է

Ռեկտորատի 30.07.2014 թվականի

թիվ 39 որոշմամբ,

Ռեկտոր Մ.Ձ.Նաբիմանյան

1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) «Օտարերկրացիների ընդունելության կարգով» (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Համալսարանի ֆակուլտետների վճարովի համակարգում ընդունելության հետևյալ կանոնները.

1. Համալսարան կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ստացել են Հայաստանում առնվազն միջնակարգ կրթություն կամ Հայաստանի առնվազն միջնակարգ կրթության մակարդակին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (ատեստատ, վկայական), առանց տարիքի սահմանափակման՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Կառավարության 28.04.2011 թվականի «Հայաստանի Հանրապետությունում բարձագույն ուսումնական

հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 700-Ն հրամանին համապատասխան:

2. Դիմորդները, այդ թվում սփյուռքահայ, կարող են Համալսարան ընդունվել նաև ընդհանուր հիմունքներով՝ կենտրոնացված քննությունների միջոցով՝ Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

3. Սույն կարգին համաձայն, ընդունելությունը Համալսարանում կատարվում է՝

ա) պայմանագրային հիմունքներով, վճարովի հիմունքներով՝ «Համալսարանի ուսման վարձաչափերի մասին» կանոնակարգին համապատասխան .

բ) միջպետական և միջգերատեսչական պայմանագրերով կամ համաձայնագրերով՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) օտարերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում.

գ) Հայաստանի Կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում:

4. Ընդունված դիմորդները չեն օգտվում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի առաջին կետի «ա» ենթակետով նախատեսված տարկետման արտոնությունից, բացառությամբ միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով նախատեսված դեպքերի:

2. Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ն Ե Ր Ի Ս Տ Ո Ի Գ Ո Ի Մ Ը

1. Քննությունների կազմակերպման և վերահսկման նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

2. Դիմորդների ընդունելությունն իրականացվում է Հայաստանի Կրթության և գիտության նախարարության կողմից դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության և

Համալսարանի կողմից՝ գիտելիքների ստուգման (այդ թվում՝ նաև հետագա ուսուցման լեզվի իմացության) հիման վրա:

Հայաստանի Կրթության և գիտության նախարարության կողմից դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացվում է Հայաստանի Կառավարության 28.04.2011 թվականի «Հայաստանի Հանրապետությունում բարձագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 700-Ն հրամանին համապատասխան:

3. Դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացնում է Համալսարանը՝ սույն կարգին համապատասխան, Հայաստանի օրենսդրության պահանջներին համապատասխան՝ Հայաստանում գործող միջնակարգ կրթական ծրագրով:

Դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է օտար՝ անգլերեն լեզվի և ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից քննություն անցկացնելով:

Դիմորդն իրավունք ունի ընտրելու 2 առարկա՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից և հանձնելու քննություն այդ առարկաներից:

4. Անգլերեն լեզվի գիտելիքների ստուգումն իրականացվում է 50 տեստի միջոցով: Դրական արդյունք է համարվում 26 տեստերի լուծումը:

Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների գիտելիքների ստուգումն իրականացվում է յուրաքանչյուրը 30 տեստի միջոցով: Դրական արդյունք է համարվում 16 տեստերի լուծումը: 12-ից 15 տեստերի լուծման դեպքում կարող է անցկացվել լրացուցիչ բանավոր հարցազրույց՝ ընտրված առարկաների շրջանակներում:

5. Գիտելիքների ստուգումների արդյունքների հիման վրա դիմորդներն ընդունվում են Համալսարանի առաջին կուրս: